

ան իր հիւանդութեան պատճառած անգութ տառապանքներուն մէջ կ'ըսէր. — «Արքան» բարի է Աստուած, զիս այսչափ տառապեցնելուն համար: Ինձի իր զրախալն մէջ աւելի զեղեցիկ տեղ մը տալու համար է որ այսպէս կ'ընէ Ան, ամէն տառապանք, թագիս վրայ աւելցող մարգարիտ մըն է: Պիտի չուզէի տառապած չըլլալ: Վիշտերը կ'անցնին, արժանիքները կը մնան»:

Վասահ եղէք, եղբայրներ, որ նոյնիսկ փորձութիւններուն մէջ, անոնք միայն կը ճաշակին խորունկ խաղաղ ութիւն մը, ուրոնք այսպիսի արխութեամբ և վեհանձնութեամբ կ'ընդունին երկնային կամքը: Կողդպիտի վրայ Յիսուսի աջին և ձախին կային երկու խաչուածներ, մին համակերպած, զջահար, որ կը տեսնէր իր հոգիին մէջ բացուիլը, Յիսուսի խօսքերուն չնորդիւ, դրախտի արշալոյին, միւսը՝ զառնացած, ըմբռաս, յուսահատ Երկու քն ալ կը մեռնէին խաչի սոսկալի մահով. բայց ո՞ւն էր ամենէն զժրախտը: Արօնն չարչարանքն էր ամենէն անգութը: Թող մեր Տէրը օգնէ մեզ ամենուն, մեռնելու համար նոյն այն զշացումներովը որոնցմով մեռաւ առաջինը, թող օգնէ մեզի, առժամս, ապրիլու՝ վասահութեամբ և հանգարառութեամբ, ինչպէս մեծ կարտինալը Մէրսիէր, որ կ'ըսէր իր մահէն քիչ առաջ. — «Իմ տարիքիս եղողի մը պիտի ներէք այս մտերմասացութիւնը, ինչպէս ամեն մարդ, ես ալ վայելած եմ ու տառապած, երբեք զժրախտ չեմ եղած: Ոչ յաղալութեան և ոչ ոլ պատերազմի տարիներուն, ոչ կարօտութեան և ոչ բարեկեցութեան, ոչ փորձութիւններու և ոչ յաջողութեան մէջ, չեմ դադրած իմ էսութեանս հետ ամենասերտ կերպով պահելու հանգիստով՝ անգորրանքը՝ խաղալութիւնը: Եւ որովհետեւ կ'ուզիմ զձեզ ամենքդ ալ երջանիկ տեսնել, թոյլ տուէք ինձի, ձեզի ըսելու թէ մարզս լինչպէս կրնայ երթալ քրիստոնէական խաղաղութեան աղքիւրին, վստահ անձնաւորութեամբը Աստուածոյ բարութեանս: Ամէն:

ԱԼՔՈՆՍ ՏԸ ՊԱՐՎԻՑԵԼ  
Թրզմ, ԹՈՐԴԱՄ ԱԲԵՂԱՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ

## ՊԱՇԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ

### ՊԱՇԵՍՏԻՆԵԱՆ ԴՐԱԽՆ ՄԸ

(Ծարունակաբան Անգլիական թիւ, 1940)

Վերադառնալով Աստ Շամբայի բանաստեղծութեանց, զրուած՝ կաւէ տախտակներու վրայ, յայտնի է որ փիւնիկեցւոց ծանօթ էին Դրախտի մը ձեւերը՝ ուր Աստուած մը կ'ուրախանար: Էլ նեմնեկ եւ լոմ հայար նշանակելով իմաստուքիւն եւ յութեանական կետնի, կատարելապէս կը համաձայնի Ծննդոց Դրախտի մէջ տընկուած քրաբույ և չարի ծառերունու Անգամ մը որ հաստատուի թէ փիւնիկեցինները՝ ուրոնք ի վերջու Աւելարիդի մէջ բնակեցան, բնիկներն էին Պաղեստինի հարաւային շրջանին, այսուհետեւ զիւրաւ պիտի ապացուուի որ փիւնիկեցիք ու խարոյէլացիք միեւնույն աղքիւրէն կ'աստանային ամենահին ժամանակներու մէջ պատահած գէպքերու և աշխարհի զրութեան նկարագրութիւնը:

De Groot ուզելով անգամ մըն ալ հաստատեի՝ որ Եղիսի Դրախտը Պաղեստինի սահմաններուն մէջ կ'իյնար, վերստին կը թափառի Ա. Գրոց համարներուն մէջ, ու կուգայ այն հարող ման՝ «որ այսօր ո՞չ մէկ պատճառ զոյսութիւն ունի չընդունելու համար որ ըստ Ծննդոց պատճուած քին, խմբագիրը Դրախտը զրած չըլլալ: Վա՛ Պաղեստինի մէջ և կամ անոր մօտերը»:

— « . . . և զիսցից ի ձեզ, և եղէց ձեր Աստուած . . . և զուք եղիշիք ինձ ժողովուրդ . . . » (Աւելական՝ ԽԶ. 12), ակնարկութիւն՝ Ծննդոց (Գ. 8) «Եւ լուսն զծոյն զիմուրը տեսան Աստուածոյ ի զրախտի անդ ընդ երեկոյ:

— «Եւ տէց ցիս. Զուրս այս որ ելանէ ի կողմ Պաղեստինց ընդ արեւելս, և իշանէ լեռաբիս, և զայ մինչև ցծով ի ջուրց ելիցն . . . » (Եղեկիէլ Խէ. 8): Բայ այս համարին, ակնարկուած զուրց կը գտնուի Յորդանանի հովիտին հարաւային մասին մէջ:

— « . . . և ծանիջիք թէ ես եմ տէր Աստուած որ բնակեալ եմ ի Սիովիլ լերին սրբութեան իմոյ, եւ եղիցի Երուսաղէմ սուրբ, և ալազգիք այս ոչ ևս անցցեն ընդ նա» (Յովէլ Գ. 18):

— « . . . Յաւուր յայնմիկ բղխսացէ ջուր կենդանի յերուսաղէմ. կէս նորա ի ծովն առաջին, և կէս նորա ի ծովն որ յետոյ զամանն և զգարուն նոյնպէս եղիցի. եւ եղիցի Տէր թագաւոր ի վերայ ամենայն երկրից (Զամարիա՝ ԺԴ. 8):

— « . . . Եւ արդ միմիթարեցից զքեղ Միովն, և միմիթարեցից զամենայն զաւերական նորա, և արարից զամենայն աւերական նորա իրրե զիրախ, և զկողմն արևմտից իրրե զիրախ Տետոն. ուրախութիւն եւ ցնծութիւն գտցեն ի նմա . . . » (Խաչի՝ ԾԱ. 3): Բայ այսմ արեւմտեան կողմը Յուգայի անտաղատն է, Յորդանանիք հովիտին հարաւային մասը: Ա. Գրական այս մէջբերումներով de Groot կը մնայ միշտ իր համոզման վրայ. — Ենթագրել՝ որ Դրախտը ուրոշեալ տեղւոյ մը մէջ չէր գտնուեր, ասոիկա նոր տեսակէտ մըն է, զոր հիները չէին կրնար յլանալ: Ընդհակառակը, կ'ենթագրութիւն որ ան աշխարհիս ունէ մէկ մասին մէջ զոյութիւն ունեցած է, և որ սակայն անդաւանելի էր ու նոյնպէս անմերձենալի, ա'յն դարձուն մէջ՝ ուր Ծննդոց հեղինակը կ'ապրէր: Կարելի չէ՞ արգեօք զՊազգեստինի մէջ կամ անոր մօտերը բառերը աւելի ճշգել և կամ կենալ հոն: Բայ de Grootի կարելի է քայլ մը ևս առաջ երթալ, համաձայն հետեւեալ տուեալներու.

1. — Դրախտը կը գտնուէր ոլնդ արեելոս, այսինքն արեելքը ա'յն տեղւոյն՝ ուր կը բնակէր հեղինակը: Այդ տեղը զոր երուսաղէմը պէտք էր իմանալ, տարտամ նշանակում մըն է, որ կրնայ ա'յնքան պատշաճիլ Յորդանանի հովիտին եւ կամ Սուրբոյ, որքան Յորդանանի արեելքին, կամ երկու գետերու երկրին: « . . . զԱսուրեսան յիլիցն արեու . . . » (Խաչի՝ Ժ. 11): Բայց այս վերջին հաւանականութիւնը ինքնին կը ժխտուի Ծննդոց Դ. 24 համարով՝ ուր տեսարանը գրուած է Դրախտին արեելքը, որմէ կ'ենթազրուի որ նախամարդուն անկումէն յետոյ մարդկութիւնը շարունակեց ապրիլ Դրախտին արեելեան կողմը, երկու գետերու երկրին մէջ, ինչպէս որ տեսանք: Արդ, ճիշդ պիտի ըլլար ընդունիլ որ Դրախտը պէտք էր գտնուած ըլլար նոյն այդ երկրին արեւմտեան կողմը, որ է Սուրբին կամ Պաղեստինը:

2. — Դրախտը կը գտնուէր դաւուի մը

մէջ (Ծննդոց Բ. 8), « Եւ տնկեաց Աստուած Դրախտն . . . » :

3. — Յաջորդ համարը այնպիսի տեղւոյ մը յատուկ է, ուր ամէն տեսակի ծառուր կը բուսնէին զգեղեցիկ ի տեսանել եւ քաղցր ի կերակուրո, ինչ որ բոլորովին կը պատշաճի Պաղեստինի լեռներուն:

4. — Բայ Ծննդոց Բ. 10<sup>o</sup> Դրախտը կը գտնուէր զաշտի մը մէջ՝ ուրիշ գետ մը կը հոսէր, և որուն անունը չի յիշուիր սակայն: De Groot այս կէտին մէջ ալ կ'ուզէ հաւատալ որ Ծննդոց այս և յաջորդ քանի մը համարները ընդհանրապէս նկատուած են հնագոյն աղբյւրէ մը իրը վերջէն աւելցուած համարներ: Միւս կողմէ կ'ընդունի սակայն որ այս մասին իր ապացոյցները լրիւ չըլլալուն, կը մնայ ենթադրութեան մը մէջ, ու թերես հեղինակին գրելու մէկ ձևին (style) կարելի ըլլայ վերագրել նոյն համարները: « Ամէն պարագայի մէջ, կը յաւելու de Groot, Ծննդոց վերոգրեալ համարները բոլորն ալ իրարույարակից են և կը վերաբերին Դրախտի միւնոյն պատմութեան: Հոն կը պատմուի որ Դրախտէն բղխող գետը չորս թեկիու, և կամ աւելի ճիշգը, չորս գետակիցներու կը բաժնուէր. Եփրատ, Տիգրիս, և երկու ուրիշներ՝ Նեղոս, Խնդոս: Եւ ինչպէս կարելի է այս երեսոյթը բացատրել՝ եթէ ոչ զիմելով հիներու այն համոզման՝ որով անոնք կը հաւատային որ բոլոր ջուրերը իրարու հետ հաղորդակցութեան մէջ էին երկրի տակէն, ա'յն ակնաղրիւրներուն (source) չնորհիւ, որսնցմով կը կազմուէին բոլոր գետերը, իրենց ճամբուն վրայ ճոխանակով լիսներու զագաթներուն ու կողերուն վրայ պարզուած ձիւնալովք: Ինչպէս որ անցեալին մէջ Յոյները կը հաւատային որ երկրին բոլոր ջուրերը իրարու հաղորդակից են, այնպէս ալ եթովպիոյ մէջ գետ մինչև այսօր կը հաւատան որ իրենց երկրին լիճերու և գետերու բոլոր ջուրերը կը կազմուէին միակ ակէ մը, որ Յորդանան է:

Վերոգրեալ բոլոր տուեալները, ըստ de Grootի, բաւական համոզիչ են ցայց տալու համար որ Ծննդոց մէջ նկարագրուած Դրախտը կը գտնուէր Յորդանան գետի մերձակաները, որոնք պատմութեան հնագոյն ժամանակներուն շատ աւելի բարերեր էին,

որքան չէին խօրայէլացիներու ժամանակ, ու որքան չին ներկայիս : «Եւ եղիցի յաւուր յայնմիկ բուծցէ մարդ երինջ մի յարջառոց և մաքիս երկուս . և եղիցի ի բազմութենէ կաթին՝ կերիցի իւղ . զի իւղ և մեղդ կերիցէ ամենայն որ մնացեալ իցէ յերկրին : Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ եղիցի ամենայն աեղի՝ ուր իցէ հազար որթ հազար կըոոյ սկիզ . . . » (Յսային է. 21): Եւ արգարե Յորդանանի ակնաղըրեւներէն մէկուն մօտ զանուող Հուլէ լիճին կամ Մամագսնիզիսի շրջագայ գտաւոները ճոխ ու այլազան բուսականութիւն մը ունէին : Շատ հաւանական է, կ'ըսէ դե Groot որ Ծննդոց Դրախտը Մովսէս ուզած ըլլայ Պաղեստինի այս շըրջանին մէջ դնել, առանց որոշապէս տեղը յայտնելու, Յորդանանի հովիտին հարաւայն կողմը: Չորրորդ և երրորդ հազարամեակներուն (թ. ա.) երիքովի և իր անմիջական շրջակայքին վրայ չափազանց ճոխ քաղաքակրթութիւն մը ծաղկած էր. մըշակուած էին ընդգարձակ գետիներ ու գոյութիւն ունէին մեծ քաղաքներ ու գիւղեր, ինչպէս որ Թէլայլագ Կասուլի եւ նոյնինքն երիքովի մէջ կատարուած վերջին պեղումները հաստատեցին : Ու խօրայելացիներու ժամանակ այս բոլորը կը յիշէին գեռ, ու Մովսէս շատ լաւ զիտէր թէ երիքովի գաւառը որպիսի՝ ծաղկեալ քաղաքակրթութեան մը հասած էր անցեալին մէջ : Ու գարձեալ, ըստ Ծննդոց յաջորդ զլուխներուն (ժ. թ. 10) Սոգոմի և Գոմորի աղէտէն առաջ, Յորդանանով ոռողոււած հովիտը, ու մասնաւորաբար անոր հարաւային գաւառները «իրրե զԴրախտն Ասուծոյ էր», ինչպէս որ կը կարգանք . ամբարձ Ղոլտ զաշս իր և ետես զամենայն կոլմանս Յորդանանու, զի ամենայն յուրքի էր. մինչչեւ կործանեալ էր Սոսուծոյ զԱռազմ և զԳոմոր, իբրև զԴրախտն Ասուծոյ էր, և իրրե զերկիրն եղիպտացւոց՝ մինչև ի գալ ի Զոռորա . . . : Ու Ռաս Շամբայի կաւէ տախտակներուն վրայ արձանագրոււած Եսայի երկիրը մեծագոյն հաւանականութեամբ «Եահվէի Դրախտն» է, ուր կը յիշուին աքալցը ծառերը», որոնք անկամած արմաւենիի ծառերն են: «Եւ գետելանէր եղեմայ . . . համարին մէջ գետը՝ Յորդանանով է որ կը բնորոշուի, թէն ըստ de Grootի, Մովսէս ուզած չըլլայ յիշաւ-

տակել զայն, ա'յնքան ծանօթ էր Յորդանան իր բարիմասնութիւններովը, ինչպէս որ կը տեսնենք Ասորուոց Նէման իշխանի բորոտութենէն սրբելու պատմութեան մէջ . ո . . . Ե'րթ լուս եօթն անգամ իր Յորդանան, և գարձցի մարմին քո և սրբացիս: Բորոտութենէ վարակուած ասորի զինուորականը կը բարկանայ և կ'ըսէ . «ո'չ լաւ իցեն Նաբանա (Պարատա) և Փարվարա գիտք Դամակոսի քան զամենայն ջուրս Իսրայելի . . . » (Դ. Թագաւորութեանց՝ ե. 1-19): Նէման անսալով իր ծառաներու խնդրանքին, կ'իջնէ Յորդանան և եօթն անգամ կը մկրտաւի ու բորտացած մարմինը մատղաշ մանկան մը մարմնոյն պէս կ'ըլլայ ու կը բժեկուի: Հո'ս, Յորդանանի ջուրերը կը ներկայանան իրենց բուժիչ հանգամանքովը: Բայց այսքանով չէր որ դե Groot պիտի ուզէր բաւականանալ. Սիրախ իմաստութեան մէջ (իդ. 25) Յորդանան Ծննդոց չորս գետերուն հետ իրը մէկ ցայտով (jet) յիշատակուած կը տեսնենք . ո . . . Որ զեղու իրրե զՓիտն զիմաստութիւն, և որպէս զԾիգրիս յաւուրս կանխոց: Որ լցուցանէ իրրե զնփրաւ՝ զհանձար, և իրրե զՅորդանան յաւուրս հնձոց: Որ երեւեցուցանէ իրրե զլոյս զիտրատ, և իրրե զԳինոն յաւուրս կիոց: Մովսէսի եւ իր խմբագրած Զնգամանեանի յաջորդող գարերուն, հետզհետէ բարեշրջուեցան Իսրայէլացւոց գաղափարները ու Եգեմի հիմնական գետը Յորդանանը նկատուելով, անկէ բղխոց ու չորս թեերու բաժնուող գետերն ալ, թերևս իրենց այլաբանական իմաստովը, կոչուեցան Եփրա, Տիգրիս, Գեհոն և Փիտն (\*):

Որքան յառաջ տարուին Ռաս Շամբայի պեղումները՝ այնքան պիտի զիւրանայ այս և ասոր նման Ա. Գրական կնճռոտ խնդրոց մեկնաբանութիւնը:

Հայեալ

ԱՐՏԱՒՐՈՋ. ԱՐՔԵԳԻՅԱԳՈՅՈՒ

(Ա.Ե.Բ.Զ)

(\*) Joh. de Groot; Un Paradis Palestinien? Mélanges Syriens. Paris. 1939. II. Համոր, էջ 67-72.